

Ճողրու Երևանցի



ՈՒՐԱՆ  
ՆԿԱՐԻՉ



# ԹԵ ԻՆՉՈՒ...

Հեքիաթներ բնության երևույթների մասին

Կարդա  
և  
գունավորիր




3



Ճուղուր Երևանցի

# ԹԵ ԻՆՉՈՒՄ...

Հեքիաթներ բնության երևույթների մասին




ԷՂԻԹ ՊՐԻՆՏ  
հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ

# ԹԵ ԻՆՉՈՒ Է ԼՈՒՍԻՆԸ ՓՈՓՈԽՎՈՒՄ

**Ե**րեխաները շատ են սիրում երկնքին նայել: Եվ նայում են թե՛ ցերեկը, փորձելով դիտել Արևին, և թե՛ գիշերը՝ հնայվելով Լուսնի գեղեցկությամբ: Իհարկե, Լուսինն ու Արևը շատ լավ գիտեն, որ իրենց գեղեցկությունն անսկառ չի մնում մարդկանց աչքից, և սկսում են վիճել, թե իրենցից ով ավելի դուր կգա մարդկանց: Իսկ թե ինչ ստացվեց այդ վիճաբանությունից, ես հիմա կփորձեմ ձեզ պատմել:

Երկիր մոլորակը, որի վրա մենք ապրում ենք, միշտ էլ ձգտել է դեպի Արևը: Այնքան է ձգտել, որ մինչև հիմա պտտվում է Արևի շուրջը տարին տասներկու ամիս ու միշտ փորձում է գրույցի բռնվել նրա հետ: Սակայն Արեգակը շատ զբաղված է և ժամանակ չունի գրույցի բռնվելու Երկիր մոլորակի հետ:

Մեր շատ սիրելի Արևը կարծես թե վառարան լինի և ամեն վայրկյան հետևում է, որ հանկարծ իր կրակը չհանգչի, ու շատ պատասխանատու է իր գործում: Ախր, եթե հանկարծ Արեգակի կրակը հանգչի, բոլորս ցրտից կսառչենք:



Բայց, այ, Լուսինը դա չէր հասկանում, ու այդքան էլ ջանասեր չէր և ժամանակ առ ժամանակ ծուլություն էր անում ու չէր հետևում իր վառարանին: Առավոտից երեկո պտտվում էր Երկրի շուրջը, որպեսզի իր գեղեցկությունը մարդկանց ցույց տա և այդ առումով առաջ անցնի Արևից: Եվ մի օր Լուսինն Արեգակին ասաց.

– Թերևս դու չես հասկանում, որ մարդիկ չեն կարողանում հիանալ քեզնով հենց քո ջանասիրության պատճառով: Անդադար գործարկում ես վառարանդ և հենց այդտեղից դուրս եկող լույսով այնպես


ես շլացնում մարդկանց, որ նրանք չեն կարողանում հիանալ քո գեղեցկությամբ: Գիտենալով որ շատ գեղեցիկ ես, մարդիկ փորձում են քեզ նայել, բայց դժվարանում են, քանի որ քո ճառագայթներին չեն կարողանում նայել բաց աչքերով: Չեն կարող ժամանակ առ ժամանակ հանգցնել քո վառարանը, ինչպես ես եմ հաճախ անում:

– Իհարկե, չեմ կարող, այդ դեպքում մարդիկ կսառչեն և ավելի շատ կմտածեն տաքանալու և ոչ թե ինձնով հնայվելու մասին, – պատասխանեց Արևը:

– Դե, գիտե՞ս ինչ, գեղեցկուհի Արեգակ: Մարդիկ իրենք էլ սեփական վառարաններ ունեն, թող դրանք օգտագործեն և տաքանան, – ավելացրեց Լուսինը:


– Չգիտեմ, թե դու ինչպես, բայց ես շատ պատասխանատու գործ եմ անում և գեթ մի վայրկյան չեմ անջատելու վառարանս, – պատասխանեց Արևը:

– Շատ լավ, – վրա բերեց Լուսինը, – ես այդքան աշխատասեր



չեն, ինչպես դու, և ժամանակ առ ժամանակ կարող եմ անջատել իմ վառարանն ու անընդհատ պտտվել Երկրի շուրջը, որ մարդիկ կարողանան ինձ դիտել և հիանալ իմ գեղեցկությամբ: Չեմ ուզում իմ վառարանի լույսով շլացնել մարդկանց աչքերը:

Այդպես էլ եղավ, Լուսինը այնքան զմայլվեց իրենով և այնքան շատ անջատեց իր վառարանը, որ այլևս մոռացավ դրա մասին և վերջնականապես սատեց: Նա այլևս չկարողացավ վերագործարկել իր վառարանը և դարձավ սառը երկնային մարմին: Բայց ամենից սարսափելին այն էր, որ վառարանի անգործության պատճառով նա կորցրեց նաև իր լույս տալու ունակությունը և շատ մտահոգվեց, քանի որ մարդիկ արդեն իրեն չէին նկատում:




Ստիպված օգնության դիմեց Արևին:

- Իմ սիրելի Արեգակ,- ասաց նա:- Իմ եսասիրության ու ծուլության պատճառով չհետևեցի վառարանիս. այն վերջնականապես հանգեց, ու հիմա ես մրսում եմ, անգամ լուսավոր չեմ: Չեմ կարող ինձ օգնել, որ այս հիմար վիճակից դուրս գամ:

- Իհարկե, կօգնեմ, բայց միայն գիշերները, ցերեկները ես շատ զբաղված եմ և օգնում եմ մարդկանց:


- Իսկ ինչ կանես դու գիշերները,- հարցրեց Լուսինը:






## ԹԵ ԻՆՉՈՒ Է ԿՐԱԿԸ ՊԱՐՈՒՄ

**Ե**րբ երկար նայում ենք վառվող խարույկին, կարծես կրակի բոցերում պար ենք նկատում: Ամեն անգամ խարույկը պարում է անկաշկանդ, մանավանդ քանու հետ՝ մերթ ընդ մերթ ճռթճռթալով ու փայլատակելով: Սակայն այդ պարը երբեք երկար չի տևում, և որոշ ժամանակ անց խարույկի բոցերը մարում են, ու դրա հետ դադարում է նաև կրակի բոցաշունչ պարը: Իսկ գիտե՞ք արդյոք, թե ինչու է կրակը պարում, եթե չգիտեք, ուրեմն լսեք իմ պատմությունը:



Շատ ժամանակներից ի վեր Արևը և Կրակը բարեկամություն են անում: Իսկ ով չգիտի, որ Կրակը Արևի զավակն է և գոյություն ունի հենց նրա շնորհիվ: Միրելի՜ երեխաներ, դուք լսած կլի՞նեք, որ ամռան շոգ օրերին դաշտերում Կրակը չորացած խոտեր է վառում, և նույնիսկ, եթե շոգ օրերը երկարում են, անտառ-





ներ է հրդեհում: Այս հրդեհների պատճառը կիզիչ Արևն է, որի ճառագայթները հասնելով Երկիր՝ կրակի են վերածվում:

Կրակից շատերն են վախենում, անգամ գիշատիչ գազանները և նույնիսկ մարդիկ, եթե հրդեհ է լինում: Եվ այս ամենը ժամանակին շատ լավ էր գիտակցում Կրակը ու գնալով գոռոզանում էր, երբեմն մոռանալով անգամ, որ ինքը Արևի զավակն է: Այդ գոռոզությունը գնալով այնքան սաստկացավ, որ Կրակը սկսեց նախատել Արևին և այս ու այստեղ չարախոսել նրան:

– Այդ ինչնու պիտի մարդիկ միշտ հիանան Արևով և երբեմն չնկատեն ինձ, – մի օր նա բողոքեց Քամին:

– Իսկ ուզածդ ի՞նչ է, – զարմացավ Քամին:

– Չէ որ ես էլ, ինչպես Արևը, լույս եմ տալիս, ինչնու չէ, նաև տաքացնում եմ մարդկանց: Իսկ նրանք կարծես դա չեն նկատում և շարունակում են գնալվել ոչ թե ինձնով, այլ Արևով: Չէ, այստեղ ինչ որ մի անարդար բան կա, – պատասխանեց Կրակը:

– Ես այստեղ ոչ մի անարդարություն չեմ տեսնում, – մտահոգվեց Քամին: Նախ՝ դու Արևի զավակն ես, ու պարտավոր ես հարգել քո ծնողին և ոչ թե նրան նախանձել: Բացի այդ, Արևը շատ հզոր է, նա գտնվում է երկնքում, և ջերմացնում է բոլորիս, իսկ դու միայն տաքացնում ես քո շրջապատը: Բոլորն էլ հասկանում են, որ Արևը բոլոր առումներով քեզնից շատ բարձր է ու հզոր, և դրա համար էլ նրան շատ են գնահատում:





- Գիտեն ինչ, սիրելի Քամի, հենց նոր մտքովս մի բան անցավ, և դու պիտի ինձ օգնես, որպեսզի այն իրագործեմ,- ասաց Կրակը:

- Իսկ ինչ պետք է անեմ,- զարմանքով հարցրեց Քամին:

- Նոր եմ հասկանում, թե ինչու եմ մարդիկ Արևին այդքան սիրում: Պատճառը մեկն է: Ես հողին կպած եմ, իսկ նա երկնքում է: Եթե ինձ էլ հաջողվի երկինք հասնել, ապա ես էլ մարդկանց համար սիրելի կդառնամ: Իսկ դու այդ հարցում ինձ պետք է օգնես, իմ Քամի ընկեր:

- Իսկ ես ինչպե՞ս պետք է օգնեմ քեզ,- հարցրեց Քամին:

- Դե, շատ պարզ ձևով,- պատասխանեց Կրակը: Ինքդ էլ լավ գիտես, երբ խաղում ես ինձ հետ և ուժգին փչում ես, իմ բոցերն ավելի են աշխուժանում, և ես ուժգնանում ու վեր եմ բարձրանում: Եթե դու երկար փչես ինձ վրա, ես կբարձրանամ վեր ու վեր, կհասնեմ երկինք և կհավասարվեմ Արևին: Այ, հենց այդ ժամանակ էլ կտեսնես, թե մարդիկ ինձ ինչպես կհարգեն:




- Բայց ես չեմ կարող այդքան երկար ժամանակ փչել քեզ վրա,-  
մտահոգվեց Քամին:- Անդադար փչելով՝ ուղղակի ես ուժասպառ  
կլինեմ:

- Ոչինչ էլ քեզ հետ չի պատահի: Արի ձևացնենք, որ դու փչում  
ես, իսկ ես քո շվոցի տակ պարում եմ և բարձրանում երկինք:  
Այդպես ավելի հեշտ կլինի ինձ և քեզ համար, և ոչ ոք չի էլ  
կասկածի, որ ես ձգտում եմ դեպի Արևը: Բոլորը կհասկանան,  
որ մենք երկուսով պարզապես անմոռաց պար ենք բռնել,-  
արտահայտվեց Կրակը:

Այդպես էլ վարվեցին: Քամին ուժեղ փչեց, Կրակը բորբոքվեց  
ու բորբոքվեց, թևեր առավ և բոցաշունչ պար բռնելով՝ սկսեց  
վեր բարձրանալ: Բայց նա չէր էլ հասկանում, որ Արևը շատ  
հեռվում է ապրում, և պարզապես անհնար է նրան հասնել:  
Բացի այդ, քամին էլ այդքան ուժ չուներ, որ անընդհատ փչելով  
կարողանար Կրակին այդքան վեր բարձրացնել:

Եվ պատահեց այն, ինչ պիտի պատահեր: Ճանապարհի  
կեսից Քամին ուժասպառ եղավ, դադարեց փչելուց,  
իսկ Կրակն առանց քամու օգնության այլևս երկինք  
չբարձրացավ ու, կամաց-կամաց մարելով,  
երկնքից նորից իջավ հողին ու մարեց...


Դեռ մինչև այսօր էլ, երբ Քամին ու Կրակը  
հանդիպում են միմյանց, սովորույթի համաձայն՝  
Կրակն իր բոցերով սկսում է պարել և վեր  
բարձրանալ, սակայն, հիշելով գլխովն  
անցած դառը պատմությունը, իսկույն  
սթափվում է և հետզհետե թուլաց-  
նելով իր բոցաշունչ պարը՝ սկսում է  
աստիճանաբար մարել ու մոխիր դառնալ:  
Հիմա արդեն Կրակը հասկացել է, որ Արևի  
հետ մրցելն անիմաստ է ու անտեղի:



## ԹԵ ԻՆՉՈՒ Է ՍԱՌՈՒՅՑԸ ՀԱԼՎՈՒՄ

**Ս**իրելի մանուկներ, երբ դուք մեծա-

նաք և դպրոց գնաք, ձեր դասագրքերից կիմանաք, թե ինչու է ձույն գալիս, թե ինչպես է ձմռանը սառույց գոյանում կամ թե ինչու է գարնանը ձյունը հալվում: Իսկ հիմա ես ձեզ մի հեքիաթ կպատմեմ սառույցի մասին, որը շատ երկար չի ապրում և գարնանը հալչում ու ջուր է դառնում:



Կար մի ժամանակ, երբ ջուրն ու արևը շատ մոտ ընկերներ էին և հաշտ ու խաղաղ ապրում էին իրար հետ: Սակայն հիմա այդպես չէ, և ջուրը միշտ խուսափում է արևի հետ հանդիպումից: Այ, օրինակ, երբ արևի ճառագայթները փորձում են շոյել լճակի հայելին, նրա ջուրը աստիճանաբար գոլորշիանում է և բարձրանում երկինք՝ դառնալով ամպ, չցանկանալով խաղաղ ճառագայթների հետ: Իսկ երբ ամպերը շատանում են ու կուտակվում մի տեղում, նորից խուսափում են երկնքում արևի հետ հանդիպումից և անձրև դառնալով՝ թափվում են ներքև: Իսկ


թե ինչու է միշտ ջուրը խուսափում արևից՝ դա էլ ունի իր պատմությունը:


Ով չգիտի, որ առանց ջրի կյանք գոյություն չունի: Այն հագեցնում է ծարաված կենդանիներին, արևից խանձվող դաշտերին ու այգիներին: Բայց ջուրը ևս մի կարևոր դեր ունի մեր կյանքում. քանի որ նա կրակի թշնամին է, մենք հրդեհները հանգցնում ենք հենց ջրով: Հենց այս պատճառով մի օր Արեգակը դիմեց Ջրին:

– Լսի՛ր, բարեկանս, ինչո՞ւ ես խառնվում Կրակի գործերին: Դու հո լավ գիտես, որ նա իմ զավակն է ու երբ չարաձգիություն է անում ու հրդեհներ է սարքում, իսկույն հայտնվում ես դու և մարում ես կրակի բոցերը: Չէ՞ որ քո հիմնական գործը ծարավ հագեցնելն է և կենդանություն պարգևելը և ոչ թե հրդեհներ մարելը: Խոստացի՛ր ինձ, որ այլևս չես խառնվի Կրակի գործերին: Թե չէ, ամեն անգամ նա ինձ գանգատվում է քո մասին:

– Իմ շատ սիրելի բարեկան,– պատասխանեց Ջուրը,– ախր ես ամեն օր չարչարվում եմ, ջրում եմ այգիները, դաշտերն ու անտառները՝ կյանք պարգևելով նրանց, իսկ այդ չարաձգի Կրակը փչացնում է իմ ողջ աշխատանքը՝ հրդեհելով և մոխիր դարձնելով ամեն ինչ: Ես ինչպե՞ս կարող եմ հանդուրժել նրա այս արարքը:

– Դու քո գործը լավ ես անում, վերևից տեսնում եմ, թե որքան շատ ես չարչարվում ու ջանասեր ես: Բայց կրակի հետ խաղ անելն էլ վտանգավոր է, եթե դու շարունակես նույն ձևով վարվել նրա հետ, ես կգժտվեմ քեզ հետ...





Ջուրն այլևս չպատասխանեց Արևին ու գլխիկոր հեռացավ: Նա լավ էր հասկանում, որ ամեն անգամ, կանխելով Կրակի չարաձձի արարքներն ու հրդեհները հանգցնելով, դառնում է ոչ միայն Կրակի աչքի փուշը, այլև կորցնում է իր բարեկամ Արեգակին: Դա քաջ գիտակցում էր նաև Կրակը և դիտավորյալ ավելի շատ էր չարաձձիություն անում:

Ու մի օր էլ Կրակը չափն անցավ ու հրդեհ առաջացրեց շատ մեծ տարածքով: Վառվում էին ծաղկած այգիները, փարթամ անտառները, դաշտերն ու մարգագետինները: Դե, Ջուրը չհանդուրժեց այս ամենը, ամբողջ ուժով գործի անցավ և օր ու գիշեր անձրև դարձած՝ շատ դժվարությամբ հանգցրեց հրդեհը: Կրակը դրանից հետո նորից գանգատվեց Արևին: Արևը լսելով այս ամենը՝ շատ զայրացավ ու դիմեց Ջրին:

– Բավական է: Հիմա արդեն ես խզում եմ իմ բարեկամությունը քեզ հետ: Ջգուշացրել էի, չէ՞, որ Կրակի հետ խաղ անելը վտանգավոր է: Դու ինձ չլսեցիր, և շարունակեցիր հրդեհներ հանգցնել: Ես այլևս չեմ հանդուրժի քո այդ ինքնագործունեությունը և այնպես կանեմ, որ գոնե ձմռան ամիսներին սառչես, սառույց դառնաս, այդպես քարացած մնաս անգործ և քիթդ չխոթես Կրակի գործերի մեջ ու մեզ հանգիստ թողնես:

Եվ այդպես էլ եղավ: Մինչև օրս ձմռանը ջուրը սառչում է, քարանում ու մնում է անգործ, դառնում է սառույցի կտոր՝ ծածկելով լճերն ու գետերը: Սակայն, կախվելով մեր տանիքներից, անհամբեր սպասում է գարնան գալուստին, որպեսզի նորից ջուր դառնա և ամռանը կրակի հախից մի լավ գա: Եվ երբ ձմեռը նահանջում է՝ գարնան շունչը զգալով, սառույցը ուրախությունից արտասվում է: Ուրախության արցունքները կաթիլ-կաթիլ ընկնում են ցած ու համախմբվելով դառնում են ջրի առվակներ: Ահա թե ինչու է ամեն տարի Կրակի պատճառով ձմռանը ջուրը պատժվում և սառույց դառնում, իսկ գարնանը՝ նորից հալվում:

Ի դեպ, մարդիկ էլ իմանալով այս պատմությունը՝ հաճախ են միմյանց ասում. «Կրակի հետ մի խաղացեք, թե չէ հաստատ կպատժվեք»:



## ԹԵ ԻՆՉՈՒ Է ՋՐՎԵԺՆ ԱՂՄԿՈՒՄ

**Ե**րբ մոտենում ես վերևից թափվող ջրվեժին, ոչ միայն հիանում ես այդ գեղեցիկ տեսարանով, այլև ջրից եկող բարձր աղմուկ ես լսում, որն օրինաչափ է և ունի իր պատմությունը:

Ժամանակին մի հանդարտ գետ էր հոսում տափաստաններով ու դաշտերով: Նա շատ բարի էր և իր հանդարտությամբ բոլորի սիրելին էր դարձել: Անգամ չէր թողնում, որ որևէ կենդանի էակ ջրահեղձ լինի իր ջրերում: Ընդհակառակը, բոլորին հրավիրում էր գովանալու կիզիչ արևից, ամառային տապից և կանաչ ու գովություն էր շաղ տալիս իր ճանապարհին:

Բայց արի ու տես, որ հանդարտ գետն ուներ ոչ միայն բարեկամներ, այլև իրեն նախանձողներ: Դրանք այն գետակներն ու առվակներն էին, որ իրենց ճանապարհին ի վերջո միանում էին հզոր գետին և վերջինիս ավելի ջրառատ դարձնում:

Բանն այն էր, որ ամառվա շոգ ամիսներին առվակների ու գետակների մեծ մասը չորանում էր և նրանցով համարյա ջուր չէր հոսում: Նրանք այնքան էին տկարանում ու ցամաքում, որ կորցնում էին իրենց երբեմնի հմայքը և նախանձով էին նայում գետին, որը հպարտ ու դանդաղ ընթացքով ու միշտ ջրառատ հոսում էր իր հունով:

Եվ այդ իրավիճակը կարծես «հունից հանում էր» գետակներին ու առվակներին:

- Այսպես անարդար է, - մի օր շշուկով ասաց առվակը գետակին:
- Ամբողջ տարին մենք ենք սնուցում մեծ գետին, որ նա ջրառատ







լինի, իսկ երբ գալիս է ամառը, ու համարյա ցամաքում ենք, նա մեզ չի օգնում և ժլատի պես մեզ ջուրը հետ չի վերադարձնում, որպեսզի մենք էլ լավ զգանք և հանգիստ հոսենք:

Երբ այդ մասին մեծ գետը լսեց, շատ զարմացավ ու պատասխանեց առվակին:

– Ի՛նչ սիրելի առվակ, ես ամռանը չեմ կարող ետ վերադարձնել քո ջուրը, ախր դա շատ անհրաժեշտ է դաշտերին, հանդերին, որոնց ես ջրում եմ իմ ճանապարհին և փրկում եմ երաշտից: Հետո էլ, գիտե՞ս ինչ կա, դու ես ինքնակամ եկել միացել ու քո ջուրը նվիրել ինձ: Այդ ո՞վ է տեսել, որ նվերը նորից հետ ուզեն:

Իհարկե, այս պատասխանը դուր չեկավ առվակին, և նա մեծ գետից թաքուն շարունակեց իր չարախոսությունը գետակի հետ:

– Դու նայի ու տես, թե մեծ գետը ինչ հպարտությամբ է հոսում ամռան ամիսներին: Բոլորը զմայլվում են նրանով: Եթե մենք չլինեինք ու նրան ջուր չտայինք, որտեղի՞ց պետք է դառնար այդքան ջրառատ:

– Համաձայն եմ քեզ հետ,– պատասխանեց գետակը:– Մենք բոլորս ինքնագոհ մեծ գետի մեջ ենք թափվում ու ջուր տալիս նրան: Իսկ նա ապերախտի մեկն է, և շատ շուտ է մոռանում այս ամենը, նույնիսկ ամռան շոգ ամիսներին չի էլ ցանկանում մի փոքր ջուր վերադարձնել մեզ, որ լավ զգանք: Այ, այդ արարքի համար արժի նրան պատժել:

– Այս պահին մի հետաքրքիր միտք ծագեց իմ մեջ,– բացականչեց առվակը:

– Ի՛նչ ես մտածել, ի՛նչ բարեկամ,– հարցրեց գետակը:

– Արի իրոք պատժենք այդ ինքնահավանին:

– Իսկ ինչպե՞ս,– զարմացավ գետակը:– Չէ՞ որ մենք շատ տկար ենք և անզոր ենք ջրառատ գետին հաղթելու:

– Այստեղ ուժը կարևոր չէ: Այստեղ խորամանկություն է պետք անել: Ես նրան կասեմ, որ սարերից այն կողմ տապից չորացող այգիներ կան, որոնք հեռու են գետի ընթացքից: Թող հունը





փոխի ու շտապի չորացող այգիները ջրելու: Նա այդ անպայման կանի, քանի որ շատ բարի է: Բայց հունը փոխելով՝ ճանապարհին կհասնի բարձր քարափի և այնտեղից սրընթաց կգահավիժի ու մեջքը կկոտրի: Հենց այդպես էլ մենք նրան կպատժենք:

– Լավ ես մտածել,- ասած գետակը, արի գնանք մեծ գետի մոտ և հայտնենք այդ սուտ լուրը:

Այդպես էլ արեցին: Գետակն ու առվակը թափվելով մեծ գետի մեջ՝ նրան փոխանցեցին չորացող այգիների մասին իրենց հորինած պատմությունը և խնդրեցին, որ օգնության հասնի:

– Իսկ դուք գիտե՞ք այգիներ տանող ճանապարհը,- հարցրեց մեծ գետը:

– Իհարկե գիտենք,- միահամուռ բացականչեցին գետակն ու առվակը և ստիպեցին մեծ գետին հունից դուրս գալ ու գնալ այլ ճանապարհով, որտեղ խոր քարափ կար:

Հունից դուրս գալով՝ գետը սկզբում հանգիստ հոսում էր, բայց երբ հասավ քարափին, սրընթաց գահավիժեց ու ջրվեժ դարձավ: Նա սկսեց բարձր ձայնով աղմկել և զայրանալ գետակի և առվակի վրա, որ խաբել են իրեն և ցանկանում են հաշվեհարդար տեսնել իր հետ: Բայց հետո բարձր քարափից գահավիժեց և, անվնաս հասնելով գետնին, հանգստացավ, ներեց իր ընկերներին ու նորից հանդարտ հոսեց իր հունով, քանի որ իր հետ ոչինչ էլ չպատահեց:

Եվ մինչև այսօր քարափից գահավիժելիս և ջրվեժ դառնալիս հանդարտ գետը սկսում է բարձր ձայնով աղմկել և հանդիմանել գետակին ու առվակին: Ահա թե ինչու է գետը ջրվեժ դառնալիս անընդհատ աղմկում, երբ հունից դուրս է գալիս:


Իմիջիայլոց, մարդկանց մասին էլ հաճախ ասում են. «Այս հանգիստ մարդուն հունից մի հանեք, այլապես նա շատ կբարկանա և իր շուրջն աղմուկ կբարձրացնի»:

# ԹԵ ԻՆՉՈՒ Է ԾԻԱԾԱՆԸ ԳՈՒՆԱՎՈՐ

**Ե**րբ ես փոքր էի, շատ էի ուզում անձրևից հետո երկնքում հայտնված ծիածանի տակով անցնել: Ասում էին, թե այդ դեպքում հրաշք տեղի կունենա: Ասում էին նաև, թե ծիածանի տակով անցնելիս ով տղա է՝ աղջիկ կդառնա, և ով աղջիկ է՝ տղա կդառնա: Անկեղծ ասած, ես մինչև հիմա չեմ հանդիպել որևէ մեկին, որին հաջողված լինի ի վերջո անցնել ծիածանի տակով, բայց այնուհանդերձ բոլորն էլ խոստովանում են, որ ծիածանը շատ գեղեցիկ է իր ձևով ու գույներով:



Մարդիկ շատ են ափսոսում, որ ծիածանը կարճ ժամանակով է մեզ հյուր գալիս, այն էլ միայն անձրևից հետո, երբ շողում է արեգակը: Եվ ամեն անգամ, հայտնվելուց մի քանի րոպե անց, երկնակամարից շտապում է հեռանալ՝ հավաքելով իր գեղեցիկ գույները, իսկ թե ինչու է այդպես լինում, ես հիմա ձեզ կպատմեմ...



Դուք արդեն նախորդ հեքիաթներից գիտեք, որ Անձրևը այդ չարաձձի Կրակի պատճառով միշտ վիճում էր Արևի հետ, և ոչ մի կերպ նրանք ընդհանուր լեզու չէին գտնում: Օրերից մի օր Անձրևը դիմեց Արեգակին.

- Ես քեզ խնդրում եմ, երբ անձրև է գալիս, դու մի հայտնվիր երկնքում, ես միայնակ եմ ուզում երևալ մարդկանց աչքերին:

- Այդպես ճիշդ կլինի,- զարմացավ Արեգակը,- մարդիկ ինձ շատ են սիրում և միշտ էլ ուզում են տեսնել ինձ: Առանց այն էլ գիշերները չեմ հայտնվում և իմ փոխարեն Լուսնին եմ ուղարկում երկինք, հիմա էլ ուզում ես, որ անձրևի ժամանակ էլ հեռանամ: Հաստատ, դրանից մարդիկ շատ կտխրեն:

- Հա, շատ եմ ուզում,- պատասխանեց հանդուգն Անձրևը:  
- Արի պայմանավորվենք, որ միասին չլինենք: Իսկ եթե որոշես չհեռանալ, ես իմ սև ամպերով կծածկեմ երկինքը, և դու այլևս տեսանելի չես դառնա մարդկանց համար:

Եվ այդպես էլ նրանք այդ պայմանը չխախտեցին: Երբ անձրև էր գալիս, երկինքը պատվում էր սև ամպերով, և Արևը այլևս չէր երևում: Բայց դա բնավ դուր չէր գալիս մարդկանց, մանավանդ, երբ օրերով տեղատարափ անձրև էր գալիս: Այդ ժամանակ շրջապատը մի տեսակ տխրում էր, թռչունները չէին ծվվում, ծառերի տերևները և ծաղիկները մի տեսակ կծկվում էին՝ անհամբեր սպասելով անձրևի ավարտին ու Արեգակի մուտքին:

Իմիջայլոց, դա բոլորովին չէր հետաքրքրում Անձրևին:

Ընդհակառակը, նա իրեն շատ լավ էր զգում, երբ երկար ու ձանձրալի անձրևային օրերին շրջապատում մելամաղձոտ տրամադրություն էր ստեղծում և այդ իսկ պատճառով ձգտում էր հնարավորինս երկար անձրևել, մինչև որ սև ամպերը կվերանային:


Դե, իհարկե, նման իրավիճակն էլ դուր չէր գալիս մյուսներին, ու մի օր էլ թռչունները որոշեցին գանգատվել Արևին:


- Մեր սիրելի՛ Արեգակ,- ասացին նրանք,- ինչո՞ւ չես երևում երկնքում, երբ անձրև է գալիս: Մենք քեզ շատ ենք կարոտում, երբ անձրևը օրերով չի կտրվում:

- Անկեղծ ասած, ես և Անձրևը պայմանավորվել ենք միասին չլինել, և անձրևոտ օրերին այդ պատճառով թաքնվում եմ սև ամպերի հետևում,- պատասխանեց Արևը:

- Իսկ չէն կարող խախտել այդ պայմանը,- զարմացան թռչունները:

- Կարող եմ միայն մի դեպքում, երբ լուրջ պատճառ ունենամ:





Ինձ ժամանակ տվեք, ես կնտածեմ և այդ պատճառը կգտնեմ,- պատասխանեց Արեգակը:

Իմաստուն Արեգակը երկար մտածեց ու Անձրևին համոզելու ելքը գտավ: Ու մի օր էլ դիմեց նրան:

- Ես հիշում եմ միասին ջլինելու մեր պայմանը, բայց այն կարելի է երբեմն խախտել, եթե ես քո կաթիլներով ու իմ ճառագայթներով մի գեղեցիկ գունագարդ տեսարան սարքեմ երկնքում:

- Իսկ ի՞նչ տեսարան է,- զարմանքով հարցրեց Անձրևը:

- Դու այն անպայման կհավանես: Ես իմ ճառագայթներով և քո կաթիլներով երկնքում մի մեծ ծիածան կնկարեմ՝ յոթ հիասքանչ գույներով, որից աչքդ չես կտրի,- պատասխանեց Անձրևը:

- Լավ, այդ դեպքում ես համաձայն եմ, որ մենք միասին լինենք, բայց շատ կարճ ժամանակով, միայն անձրևը կտրվելու ժամանակ, երբ իմ գործը ավարտած կլինեմ,- եզրափակեց Անձրևն ու հեռացավ:


Ու այդ օրվանից անձրևից անմիջապես հետո, երբ Արևը հայտնվում էր երկնքում, գեղեցիկ գույներով ծիածան էր նկարում, բայց միայն կարճ ժամանակով, մի քանի րոպեով, որպեսզի չխախտեր Անձրևի հետ իր պայմանավորվածությունը:

Եվ թերևս դա է պատճառը, որ այդ կարճ ժամանակամիջոցում մարդիկ մինչև հիմա չեն կարողանում հասնել ծիածանին և նրա տակով անցել:


## ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ԼԵՌՆԵՐԸ ԼՈՌԻՍ

**Ռ** ուք նկատած կլինեք, որ մեր բնաշխարհի լեռները շատ լուռ են և երբեք չեն աղմկում, ինչպես ջրվեժները, անձրևը կամ ամպրոպը: Բայց գիտե՞ք, երբ բոլորը քնում են, կեսգիշերին մթության մեջ լեռները կամացուկ խոսում են միմյանց հետ, այնքան կամաց, որ մենք այդ չենք էլ նկատում: Ու նրանք զայրացած բողոքում են ամպերից...

Եվ այսպես, լեռները ոչ միայն խոսել, այլև զայրանալ գիտեն: Իսկ երբ շատ են նյարդայնանում ու ջղայնանում, սկսում են գոռգոռալ և նրանց միջից հրաբուխ է ժայթքում: Եվ ով չգիտի,







որ հրաբուխների ժամանակ լեռները աղմուկ-աղաղակ են բարձրացնում և իրենց գագաթներից սարսափազդու դղրդոցով շուրջը լավա են շաղ տալիս: Իսկ թե ինչու է այդպես լինում, դուք հիմա կհմանաք իմ հերթական հեքիաթից:

Անպի քուլաները հաճախ էին հավաքվում բարձր լեռների գագաթներին և զրուցում դեսից-դենից: Նրանց թվում էր, որ եթե լեռները չեն խոսում, ուրեմն չեն էլ լսում: Բայց արի ու տես, որ լուռ ու մունջ լեռներն ականջ էին դնում ամպերի զրույցներին, որոնց մի մասը, անկեղծ ասած, նրանց դուր չէր գալիս: Հատկապես, լուռ ու մունջ լեռները չէին սիրում, երբ ամպերը խոսք էին բացում իրենց մասին.

– Չեմ հասկանում,– դիմում էր լեռան գագաթին ծվարած մեկ ամպիկը մյուսին,– ինչ օգուտ կա այս քարքարոտ լեռներից: Նրանց վրա դժվարությամբ են անտառներ աճում, իսկ գագաթները միշտ ձյունածածկ են, և նույնիսկ այնտեղ թռչուններ չեն ապրում:

– Համաձայն եմ քեզ հետ,– պատասխանում էր մյուս ամպիկը:– Գոնե մենք միավորվելով՝ անձրևաբեր ամպեր ենք դառնում և ջրում ենք ծարաված դաշտերն ու այգիները, իսկ այս քարացած լեռներն անհմաստ են ապրում և իզուր տեղ են զբաղեցնում երկրի վրա:

Դե, իհարկե, լսելով այս բամբասանքը, լեռները չէին կարող հանդուրժել և անպայման պիտի պատասխանեին ամպերին: Եվ օրերից մի օր նրանք շուկով խոսեցին:

– Ինչպե՞ս չեք ամաչում, անամոթներ,– դիմեցին նրանք ամպերին,– բավական չէ, որ ծուլորեն բազմում եք մեր գագաթներին ու հանգստանում, դեռ մի բան էլ բամբասում եք մեր մասին:


Լսելով այս՝ ամպերը անոթից շիկնեցին: Սիրելի երեխաներ, դուք երկնքում արևամուտի ժամանակ կարող եք երբեմն նկատել այդ կարմրած և շիկնած ամպերին, որոնք ժամանակին ամաչել



են իրենց բամբասանքի համար: Մակայն դեռ կային սպիտակ և հանդուգն ամպեր, որոնք նախկինի պես չէին նահանջում և շարունակում էին վիճել լեռների հետ:

- Հետո ինչ, որ թիկնում ենք ձեր գագաթներին, եթե դա ձեզ դուր չի գալիս, մենք առանց ձեզ էլ կարող ենք բաց երկնքում օրերով զբոսնել և չհոգնել,- հակադարձում էին նրանք լեռներիին:- Մոլորակի շատ վայրերում հարթավայրեր և դաշտավայրեր են, այնտեղ լեռներ չկան, ու մենք, միևնույն է, ծուլություն չենք անում և երկար ժամանակ առանց ձեզ բազմելու, մնում ենք երկնքում: Երևի թե ծուլը դուք եք, որ դարերով անշարժ կանգնած՝ ոչինչ չեք անում:

- Մենք իսկի էլ ծույլ չենք,- գայրացան լեռները: Ի՞նչ է, չեք նկատում, որ թեկուզ անշարժ կանգնած, ինչ կարևոր գործ եք անում:



– Իսկ ի՞նչ եք անում որ,– զարմացած հարցրին ամպերը:

– Դուք երբևէ մտածե՞լ եք, թե ինչպես են առաջանում գետերը: Նրանց բազմաթիվ վտակները սկիզբ են առնում հենց մեր գագաթների սառցադաշտերի հալոցքներից: Եթե չլինեին լեռները, գետերը չէին կարող ջուր վերցնել նրանց գագաթներից և հավերժ հոսել դաշտավայրերով ու տափաստաններով: Այնպես որ, չարածձի ամպիկներ, մենք չնայած չենք շարժվում, բայց ծույլ էլ չենք և բարի գործ ենք անում:

Սակայն, միևնույն է, շատախոս ամպերը չէին դադարում բամբասել լեռներից: Նրանք կարճ հիշողություն ունեին և մոռանում էին, որ լեռները կարող էին լսել իրենց հասցեին նման չարախոսություններ:

«Տարիներով քարացած կանգնած են, ո՞նց չեն ձանձրանում»: «Այնքան քարքարոտ ու չոր են, որ մարդիկ չեն էլ ուզում ապրել դրանց վրա»: «Մի՞թե կարելի է դարերով լուռ ու մունջ մնալ և անգամ չշարժվել»... Ահա այսպես էին արտահայտվում ամպերը լեռների մասին:


Ճիշտ է, լեռները քար սիրտ ունեին, բայց մի կերպ էին հանդուրժում ամպերի չարախոսությունը իրենց հասցեին: Բայց հո այդպես երկար շարունակել չէր կարելի: Ու մի օր էլ նրանց համբերության բաժակը լցվեց: Լսելով այդ բամբասանքը և չպատասխանելով ամպերին՝ լեռները ներքուստ այնքան զայրացան, որ նրանց մեջ կուտակված ցասումը հրաբխի պես ժայթքեց գագաթներից: Ժայթքող լավան ու կրակը վախեցրին և ցրեցին գագաթին կուտակված ամպերը:

Ու միչև այսօր էլ լեռները լուռ ու մունջ են և չեն խոսում: Բայց երբ իրենց ականջին են հասնում ամպերի բամբասանքները, նրանք զայրանում են և իրենց գագաթներից ժայթքող հրաբուխներով վախեցնում ու ցրում են բամբասկոտ ամպերին:



## ԹԵ ԻՆՉՈՒ Է ԾՈՎԸ ՓՈԹՈՐԿՈՒՄ

**Մ**անուկ հասակից մենք բազմիցս ենք լսել, թե ինչու է ծովը փոթորկվում: Ասում են, որ պատճառը ծովերի արքա Նեպտունի զայրույթն է, որն իր եռաժանիով մեծ ալիքներ է առաջացնում: Համոզիչ են նաև այն փաստարկները, որ ծովում փոթորիկներ են առաջացնում ուժեղ քամիները, որոնք վեր ու վար են անում ջրի ալիքները: Իսկ ես մեկ այլ պատմություն գիտեմ ծովային փոթորիկների մասին...



Կային ժամանակներ, երբ օվկիանոսներն ու ծովերը ընդհանրապես չէին փոթորկում: Նրանց ջրային հայելին միշտ հանգիստ էր, որից ներս կարելի էր տեսնել անդրծովային թագավորությունը: Իսկ այդ թագավորությունում, որտեղ կառավարում էր ծովերի և օվկիանոսների արքա Նեպտունը, շատ հետաքրքիր իրադարձություններ էին տեղի ունենում:


Ամեն օր գեղեցիկ գույներով ձկներն իրենց դեղին, ոսկեգույն, կարմիր ու կանաչ հագուստներով պարահանդեսներ էին կազմակերպում և ուրախացնում էին ծովային կենդանիներին: Չափազանց գեղեցիկ էին ջրիմուռներից կազմված անդրծովյան այգիները, որոնք որպես հարմարավետ մանկապարտեզներ էին ծառայում այնտեղ զբոսնող անհոգ և ուրախ ձկնիկների համար: Կարճ ասած՝ անդրծովյան կյանքը լիքն էր երջանկությամբ և գեղեցկությամբ, որին անտարբեր չէիր կարող նայել:

Այս հարցում հատկապես խիստ շահագրգիռ էր Կայծակը, որը ապրում էր երկնքում, սև և անձևաբեր ամպերի ներսում և երբեք չէր զգում իր շրջապատի գեղեցկության հմայքը: Ախր ամեն օր նա ականատես էր լինում, թե ինչպես են սև ամպերը կռիվ տալիս իրար հետ, թե ով պետք է նրանցից առաջինը անձրևի, և անընդհատ գոռգոռում էին միմյանց վրա: Բանը հասնում էր նրան, որ սև ամպերի միջև տեղի ունեցող գոռգոռոցն ու վեճը Կայծակը ստիպված դադարեցնում էր իր հրեղեն շանթերով, ու դրանից հետո էին միայն ամպերը լռում, և անձրև էր տեղում:

Իհարկե, այսքանից հետո, Կայծակը երկնքից երանությամբ էր նայում անդրծովյան կյանքին և շատ էր ցանկանում ապրել հենց այդ գեղեցկության մեջ և ոչ թե կռվարար ու սև ամպերի շրջապատում: Եվ ահա մի օր կայծակը խնդրանքով դիմեց ծովերի արքա Նեպտունին.

– Ինչ կլինի, սիրելի՛ արքա, որ թույլ տաս ես էլ ապրեմ քո թագավորությունում, զբոսնեմ անդրծովյան գեղեցիկ այգիներում, դիտեմ գույնզգույն ձկների պարահանդեսները, վայելեմ





ծովային հանդարտությունը: Ես շատ եմ հոգնել երկնքում ապրելով ու անընդհատ այս կովարար սև ամպերին իմ շանթերով հանգստացնելով:

- Անհնար բան է,- պատասխանեց ծովերի արքա Նեպտունը:- Ո՞վ է տեսել, որ Կայծակը ապրի ջրում: Ախր դու հուր ու կրակ ես և, հայտնվելով ջրում, անմիջապես կհանգչես ու կմահանաս: Դու հո լավ գիտես, որ կրակը ջրից մարում է:

- Իրոք, այդ մասին մինչև հիմա չէի էլ մտածել,- արձագանքեց Կայծակը:- Բայց գոնե թույլ կտամ երկնքից նայեմ քո թագավորության խորքերը ու զմայլվեմ այնտեղի տեսարաններով:


- Գիտե՞ս ինչ, սիրելի՛ Կայծակ,- դու անդրծովյան թագավորությունում կարող ես միայն ժամանակավոր հյուր լինել և դիտել միայն նրա վերևի մասը: Չեմ կարծում, որ խորանաս ջրի հատակը և իմանաս այնտեղ թաքնված գաղտնիքների մասին:

- Իսկ ի՞նչ գաղտնիքներ են դրանք,- զարմացած հարցրեց Կայծակը:

- Լավ, չեմ ասի բոլորի մասին, բայց որ շատ ես ցանկանում, կթվարկեմ մեկ-երկուսը: Ծովերի և օվկիանոսների հատակին կան խորտակված շատ նավեր՝ իրենց գանձերով ու հարստություններով, որոնք ես խնամքով պահպանում եմ: Ծովերի առափնյա հատակին կան նաև հնադարյան բնակավայրեր, նույնիսկ քաղաքներ, որոնք սուզվել են երկրաշարժերի և երկրաբանական փոփոխությունների հետևանքով: Այսքանը, էլ չեմ շարունակի...

Այս ամենը լսելուց հետո Կայծակն էլ ավելի վառվեց հետաքրքրասիրությունից և որոշեց ինչ գնով էլ լինի թափանցել ծովերի խորքը և դիտել, թե ինչ է այնտեղ կատարվում: Իհարկե, դա նրան երբեմն հաջողվում էր պարզկա և արևոտ օրերին, երբ ծովերի հատակը փոքր-ինչ երկնքից պարզորոշ էր դառնում: Եվ ստացվում էր այնպես, որ Կայծակը վերևից ժամերով գննում էր ծովային թագավորությունը:





Դե, իհարկե, այդ հետաքրքրասիրությունը բնավ դուր չէր գալիս Նեպտունին: Նա չէր սիրում, որ ինչ-որ մեկը քիթը խոթում է իր թագավորության գործերի մեջ՝ բացահայտելու անդրծովյան գաղտնիքները: Եվ դա էր պատճառը, որ մի օր նա դիմեց կայծակին:

– Տեսնում եմ, որ արդեն չափն անցնում ես: Քեզ խնդրեցի, չէ՞, որ դիտես միայն օվկիանոսի մակերեսը և սահմանափակվես այդքանով: Իսկ դու օր ու գիշեր ցանկանում ես քիթդ խոթել օվկիանոսի խորքերը, ինչն այլևս թույլ չեմ տա, և եթե այդպես շարունակես, ես միջոցներ կձեռնարկեմ, – գայրացավ Նեպտունը:

Բայց կայծակը այդպես էլ մնաց անկոտրում: Չհրաժարվելով իր հետաքրքրություններից՝ նա ամեն կերպ փորձում էր աչքը գցել ծովերի խորքերը և շարունակում էր այնտեղից գաղտնիքներ կորզել: Դա տեսնելով՝ Նեպտունը գայրացավ, որոշեց փոթորկել օվկիանոսի ալիքները և, խառնելով ծովի հայելին, այդպիսով փակեց տեսադաշտը ու թույլ չտվեց, որ կայծակն անամոթաբար զննի ծովի հատակը:

Այդ է պատճառը, որ, մինչև օրս, եթե երկնքում կայծակ է հայտնվում, ապա ծովը փոթորկում է և կատաղի ալիքներով նրան թույլ չի տալիս զննելու իր հատակը: